ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.01.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/99

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝

Ա. Խաչիկյանի (լիազորագիր տրված՝ 15.01.2020թ.)

Հ. Սարգսյանի (լիազորագիր տրված՝ 15.01.2020թ.)

քննելով «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կարիքների համար բնական գազի մեմբրանային հաշվիչների (G2.5-ից G160 ողջ տիրույթի), Elcor-M և Elcor-MU տիպի էլեկտրոնային ճշտիչներով կահավորված բնական գազի մեմբրանային հաշվիչների (G10-ից G160 ողջ տիրույթի) ստուգաչափում, վերանորոգում և տրամաչափարկում, G10, G16, G25B գազահաշվիչները Elcor-MU տիպի էլեկտրոնային ճշտիչներով և անջատիչ կափույրներով, իսկ G25A-ից G160 գազահաշվիչները Elcor-MU տիպի էլեկտրոնային ճշտիչներով կահավորում և վերանորոգում, էլեկտրոնային ճշտիչների ձեռքբերման

նպատակով հայտարարված N035/Garm/20_4.2_5.4_092-002/20.12.19 ծածկագրով բաց առաջարկի շրջանակներում «ԳԱԶ ՍՈՒԶԱՆ» ՍՊԸ-ի կողմից 27.12.2019թ. ներկայացված (30.12.2019թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/99 բողոք), պարզեցի հետևյալը.

1. «ԳԱԶ ՍՈՒԶԱՆ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ԳԱԶ ՍՈՒԶԱՆ» ՍՊԸ-ն 27.12.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «ԳԱԶ ՍՈՒԶԱՆ» ՍՊԸ-ն մասնակցելու է №035/GArm/20_4.2_5.4_092-002/20.12.19 ծածկագրով հայտարարված բաց առաջարկների հարցման ընթացակարգին:

Ընկերությունը վկայակոչել է բողոքի հետևյալ հիմքերն ու հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ի և 2-րդ մասերի համաձայն.

1. Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, կամ

2) այն մասնակցին ընտրելու մեթոդով, որի առաջարկած գնին և ոչ գնային չափանիշներին տրված գործակիցների հանրագումարը ամենաբարձրն է: Այս մեթոդի կիրառման դեպքում հայտերը գնահատելիս հրավերով սահմանած դեպքերում և կարգով, առաջարկվող գնից բացի, հաշվի են առնվում ոչ գնային այլ չափանիշներ: Ոչ գնային չափանիշները պետք է փոխկապակցված լինեն պայմանագրի առարկայի հետ և դրանց հարաբերական կշիռները ներկայացվեն հրավերի մեջ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Ընկերությունը նշել է, որ բաց առաջարկների գնման հայտարարությունը ուներ հետևյալ բովանդակությունը.

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կարիքների համար բնական գազի մեմբրանային հաշվիչների (G2.5-ից G160 ողջ տիրույթի), Elcor-M և Elcor-MU տիպի էլեկտրոնային ճշտիչներով կահավորված բնական գազի մեմբրանային հաշվիչների (G10-ից G160 ողջ տիրույթի) ստուգաչափում, վերանորոգում և տրամաչափարկում, G10, G16, G25B գազահաշվիչները Elcor-MU տիպի էլեկտրոնային ճշտիչներով և անջատիչ կափույրներով, իսկ G25A-ից G160 գազահաշվիչները Elcor-MU տիպի էլեկտրոնային ճշտիչներով կահավորում և վերանորոգում, էլեկտրոնային ճշտիչների ձեռքբերում»:

Վերոգրյալից ելնելով, Ընկերությունը գտնում է, որ Պատվիրատուի կողմից նշվել է կոնկրետ ապրանքի տեսակ, մոդել և, ըստ էության, դա խախտում է Գնումների մասին ՀՀ օրենքի պահանջները:

Բողոքաբերը ունի իր, համապատասխան փաստաթղթերը ունեցող ճշտիչ սարքեր և կոնկրետ սարքի անունը նշելով, խախտում է Բողոքաբերի իրավունքները:

Ավելին, Ընկերությունը կարծում է, որ գնումը ոչ իրավաչափորեն միացված է իրար և կարող էր արդյունավետ տարբեր գնումներով իրականացվել, քանի որ դրանք իրարից տարբեր ծառայություններ են և միացնելով նպատակ է հետապնդվում, որպեսզի բոլորը իրականացնի մեկ կազմակերպություն, բնականաբար ոչ բողոքաբերը:

Ընկերությունը գտնում է, որ իրականացվել է և իրականացվում է գործողություններ, որպեսզի հնարավորինս այդ մրցույթում հաղթի «Զեգա» ՍՊԸ-ն, որը ըստ էության անթույլատրելի վարքագիծ է:

Ընկերությունը նշել է, որ առարկում է նաև 50 տոկոսի չափով գործարք ունենալու փաստի դեմ /փորձի մասով/, գտնելով, որ այն չափազանցված և անհիմն պահանջ է և խախտում է օրենսդրության պահանջները:

Ընկերությունը ներկայացված բողոքով խնդրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ կետի համապատասխան կայացնել համապատասխան որոշում՝ արգելել ներկայացնել նմանօրինակ /բողոքում ներկայացված/ գնման պահանջներ, պարտավորեցնել ընդունել համապատասխան որոշում բողոքում նկարագրված հակաօրինական վարքագիծը վերացնելու ուղղությամբ:

Ընկերությունը ի լրումն ներկայացված բողոքի հայտնել է հետևյալը.

Ուսումնասիրելով թիվ 4.3-5.4-035 ծանուցումը, պարզ է դառնում, որ գնումը բաղկացած է հետևյալից.

550 հատ բնական գազի մեմբրանային հաշվիչների (G2.5-ից G160 ողջ տիրույթի) ստուգաչափում և վերանորոգում-9 700 000 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ

2000 հատ Elcor-M և Elcor-MU տիպի էլեկտրոնային ճշտիչներով կահավորված բնական գազի մեմբրանային գազահաշվիչների (G10-ից G160 ողջ տիրույթի) ստուգաչափում, վերանորոգում և տրամաչափարկում-129 800 000 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ

850 հատ G10, G16, G25B գազահաշվիչները Elcor-MU տիպի էլեկտրոնային ճշտիչներով և անջատիչ կափույրներով, իսկ G25A-ից G160 գազահաշվիչները Elcor-MU տիպի էլեկտրոնային ճշտիչներով կահավորում և վերանորոգում-136 000 000 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ

Ընկերության կողմից նախկինում ներկայացված բողոքը բացառապես վերաբերվում է գնման 3-րդ կետին, այսինքն սույն բողոքը քննության ենթակա չէ 1-ին և 2-րդ կետերը և բողոքներ քննող անձին առաջադրված հարցը վերաբերվում է միայն հետևյալին.

«850 հատ G10, G16, G25B գազահաշվիչները Elcor-MU տիպի էլեկտրոնային ճշտիչներով և անջատիչ կափույրներով, իսկ G25A-ից G160 գազահաշվիչները Elcor-MU տիպի էլեկտրոնային ճշտիչներով կահավորում և վերանորոգում-136 000 000 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ»

Ընկերության կողմից նախկինում ներկայացված բողոքում մատնանշվել է, որ Elcor-Mu էլեկտրոնային ճշտիչների ձեռքբերում 850 հատ, ինչպես նաև դրանց տեղադրումը գազահաշվիչների սարքերին: Մենք պնդում էինք, որ պատվիրատուն նշել է կոնկրետ ապրանքային նշան և գտել էինք, որ գնման հայտարարությունը այդ մասով ապօրինի է և անօրինական:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

2. Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Ուսումնասիրելով օրենքի հիշյալ դրույթը և գնման հայտարարությունը, պարզ է դառնում, որ գնման մեջ հայտարարությամբ նշված պահանջները ինքին արդեն իսկ ապօրինություն է հետևյալ հիմնավորմամբ:

Նշենք, որ Elcor-Mu ապրանքային նշանով էլեկտրոնային ճշտիչները միայն սերտիֆիկացված են Զեգա ՍՊԸ-ի կողմից, ով էլ 2017թ.-ից սկսած հաղթում է Պատվիրատուի գնումները: Կից ներկայացվում են թիվ 1363, 1328,1209 և 1210 սերտիկատները:

Այսինքն, էլեկտրոնային ճշտիչների տեսակ նշելով, արդեն իսկ կանխորոշված է հաղթողը և դա «Զեգա» ՍՊԸ-ն է, քանի որ միայն այդ կազմակերպությունը կարող է մասնակցել և համապատասխան ունենալ պահանջվող ապրանքներից:

Գտնում ենք, որ վերոգրյալը ակնհայտ ապօրինի քայլ է և դա խաթարում է ողջ գնումների էությունը:

Ցանկանում ենք նշել, որ իրականում այդ արժեքները գերագնահատված են և այդ ճշտիչները թանկ են սահմանվում և հնարավոր է զգալի արժեքով այդպիսի էլեկտրոնային ճշտիչների գնումը, որը կթեթեևացնի քաղաքացիների վրա դրվող ֆինանսական բեռը:

Այդպիսով, համոզված ենք, որ ակնհայտ ապօրինի է վերոգրյալը և կարծում ենք, որ այդպիսի հայտարարությամբ գնման գործընթացը օրինական չի կարող համարվել:

Այժմ անդրադառնանք բողոքի լսումներում Պատվիրատուի ներկայացուցչի հայտարարություններին:

Տեսանյութի 5.30 վայրկյանին ընկերության ներկայացուցիչը պնդում է, որ հայտարարության մեջ նշված Elkor-MU մոդելները բացառապես վերաբերվում է պահեստներում առկա կամ բաժանորդների մոտ գտնվող սարքերի վերանորոգմանը և ճշգրտմանը կամ կահավորմանը:

Այնուհետև նշվել է, որ ունենք պարկ և պետք է դրանք ստուգաչափվեն և վերանորոգվեն և կոնկրետ մոդելի հղում չկա:

Նշենք, որ իրականում ներկայացուցիչը փորձում է մոլորության մեջ դնել Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին և արտաբերում է հակասական մտքեր, նախ նշում է, որ Elkor MU մոդելները վկայակոչվել են միայն վերանորոգման, ստուգաչափման և կահավորման համար, այնուհետև նշում են, որ ունեն պարկ և անհրաժեշտ է վերանորոգման և ստուգաչափման, իսկ վերջում նշվում է, որ չեն վկայակոչել որևէ մոդել:

Նախ առանձին ցանկանում ենք նշել կարգավորման բառի տակ քողարկված գնումը, որը կապ չունի պարկում գտնվող ապրանքների վերանորոգման և ստուգաչափմանը: Ուսումնասիրելով թիվ 4.3-5.4-035 ծանուցումը, պարզ է դառնում, որ գնումը բաղկացած է թվով 850 տվյալ ճշտիչ սարքի գնումից և կահավորում բառը իրենից ենթադրում է տեղադրում, այսինքն ոչ թե գոյություն ունեցող սարքի վերանորոգում, այլ գոյություն չունեցող սարքի գնում և դրա տեղադրում:

Այսինքն, վերոգրյալ փաստարկները ակնհայտ անհիմն են և իրականում չեն հերքում մեր կողմից ներկայացվածը:

Տեսանյութի 6:40 նշել է, որ չի նշել կոնկրետ ապրանքի անվանում ձեռքբերման ժամանակ, այնինչ նույն հայտարարության մեջ նշել է,

«850 հատ G10, G16, G25B գազահաշվիչները Elcor-MU տիպի էլեկտրոնային ճշտիչներով և անջատիչ կափույրներով, իսկ G25A-ից G160 գազահաշվիչները Elcor-MU տիպի էլեկտրոնային ճշտիչներով կահավորում և վերանորոգում-136 000 000 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ»

Ակնհայտ է, որ խոսքը վերաբերվում է 850 հատ ELCOR-MU տիպի էլեկտրոնային ճշտիչների ձեռքբերում և կահավորում, այլապես ինչ այլ Elcor-MU ապրանքների կահավորման մասին է խոսվում, եթե դա նույն 850 հատ գնումը չէ:

Տեսանյութի 10:50 վայրկյանին Պատվիրատուի ներկայացուցիչը խոսում է ընկերությանը պատճառված վնասներից, սակայն չհիշատակելով, որ այդ վնասը կրել է հենց նույն Elcor-M տեսակի ճշտիչներից և այն ժամանակաշրջանում, երբ «Գազ Սուզան Արմենիա» ընկերությունը կառավարում էր այն նույն անձինք, որոնք ներկայումս կառավարում են «Զեգա» ՍՊԸ-ն:

Անմփոփելով վերոգրյալը, պետք է արձանագրել, որ հայտարարության մեջ նշելով 850 հատ Elcor-mu էլ. ճշտիչների հակավորման մասին, խախտում է բողոքաբերի իրավունքները:

Հաջորդիվ գտնում ենք, որ տեսանյութի 11:47-րդ վայրկյանում վկայակոչված փաստարկը կահավորումը վերանորոգումը և ստուգաչափումը միացնելու մասին անհիմն է և իրականում հետապնդում է նպատակ գնման գործընթացը պատվիրակել մեկ անձին՝ Զեգա ՍՊԸ-ին և հակասում է Գնումների մասին ՀՀ օրենքին:

Նաև ցանկանում ենք արձանագրել, որ Պատվիրատուն չի հիմնավորել 50 տոկոս պայմանագրի արժեքով պայմանագիր ունենալու փորձի սահմանումը, որը գտնում ենք անհիմն է և սահմանափակում է օրենքով սահմանված իրավունքները:

13:50 վայրկյանին կատարում է արտահայտություններ Գազ Սուզան Ընկերության վարքագծին, խաթարել, բողոքներով սահմանափակել, որոնք վկայում են Պատվիրատուի նախատրամադրված վերաբերմունքը Գազ Սուզան ՍՊԸ-ի նկատմամբ, որը անօրինական է և անթույլատրելի է:

Գտնում ենք, որ բողոքի սահմաններում գործողություններ իրականացնելը ապօրինի է և խախտում է օրենքը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 15.01.2020թ. ժամը 10:00-ին և 29.01.2020թ. ժամը 11:15-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կարիքների համար բնական գազի մեմբրանային հաշվիչների (G2.5-ից G160 ողջ տիրույթի), Elcor-M և Elcor-MU տիպի էլեկտրոնային ճշտիչներով կահավորված բնական գազի մեմբրանային հաշվիչների (G10-ից G160 ողջ տիրույթի) ստուգաչափում, վերանորոգում և տրամաչափարկում, G10, G16, G25B գազահաշվիչները Elcor-MU տիպի էլեկտրոնային ճշտիչներով և անջատիչ կափույրներով, իսկ G25A-ից G160 գազահաշվիչները Elcor-MU տիպի էլեկտրոնային ճշտիչներով կահավորում և վերանորոգում, էլեկտրոնային ճշտիչների ձեռքբերման համար հայտարարված №035/GArm/20_4.2_5.4_092-002/20.12.19 ծածկագրով բաց առաջարկների հարցման ընթացակարգի վերաբերյալ «Գազ Սուզան» ՍՊԸ (այսուհետ՝ Բողոքաբեր) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացրել 27.12.2019թ. բողոքը, որի կապակցությամբ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ ներկայացնում է իր դիրքորոշումը.

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն գտնում է, որ բողոքը ամբողջությամբ անհիմն է և ենթակա է ամբողջովին մերժման՝ հետևյալ իրավական հիմքերով և հակափաստարկներով:

Գործի նախապատմության վերաբերյալ

«Գազ Սուզան» ՍՊԸ-ն 27.12.2019թ.-ին բողոքներ քննող անձին է ներկայացրել բողոք՝ №035/GArm/20_4.2_5.4_092-002/20.12.19 ծածկագրով հայտարարված բաց առաջարկների հարցման ընթացակարգին, իսկ 30.12.2019թ.-ին որպես գնման մասնակից «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին է ներկայացրել համապատասխան գնման հայտ, որը գրանցվել է գրանցամատյանում:

Բողոքի հիմքերի և հիմնավորումների վերաբերյալ

Այս բաժնում Բողոքաբերը պնդում է, որ պատվիրատուի կողմից բաց առաջարկների հարցման փաստաթղթերում նշվել է «կոնկրետ ապրանքի տեսակ, մոդել և ըստ ըության դա խախտում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջները»:

Այս պնդումը չի համապատասխանում իրականությանը:

Այսպես Elcor-M և Elcor-MU էլեկտրոնային ճշտիչների մոդելների վերաբերյալ պայմանագրում առկա հղումը վերաբերվում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի պահեստում և բաժանորդների մոտ արդեն իսկ առկա գազահաշվիչների և էլեկտրոնային ճշտիչների վերանորոգման, ստուգաչափման (ՀՀ օրենսդրության պահանջ) կամ հաշվիների վրա կահավորման աշխատանքներին: Հետևաբար, մրցույթի մասնակիցը պետք է տեղեկություն ունենար, թե վերանորոգման, ստուգաչափման կամ կահավորման աշխատանքները ինչ տիպի ճշտիչների են վերաբերվում և մոդելի նշումը վերաբերվել է միայն դրանց առնչությամբ նախատեսված աշխատանքներին:

Ինչ վերաբերվում է նոր ձեռքբերվող էլեկտրոնային ճշտիչներին, ապա բաց առաջարկների հարցման փաստաթղթերում որևէ մոդելի կամ ապրանքի տեսակի վրա հղում գոյություն չունի, այլ պարզապես տառացի նշվել է «էլեկտրոնային ճշտիչների ձեռքբերում» (հիմք՝ բաց առաջարկների հարցման փաստաթղթերը, որը հրապարակվել է 21.12.2019թ.-ին www.gnumner.am կայքում): Այսպիսով պատվիրատու՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն բաց առաջարկների հարցման փաստաթղթերում որևէ կոնկրետ սարքի անուն չի նշել և Բողոքաբերի իրավունքները չի խախտել:

Բողոքաբերը գտնում է, որ իրականացվել է և իրականացվում է գործողություններ, որպեսզի հնարավորինս այդ մրցույթում հաղթի «Զեգա» ՍՊԸ-ն:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն որևէ գործողություն չի իրականացնել, որպեսզի բաց առաջարկների հարցմանը հաղթի որևէ ընկերություն, Բողոքաբերը դրա վերաբերյալ որևէ կոնկրետ փաստարկ չի նշել:

Բողոքաբերը առարկում է նաև 50 տոկոսի չափով գործարք ունենալու փաստի դեմ:

Նշված փաստի վերաբերյալ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն տեղեկացնում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն «Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.
3) տեխնիկական միջոցներ.
4) ֆինանսական միջոցներ.
5) աշխատանքային»:

Վերը նշվածի հիման վրա «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից գնման փաստաթղթերում պահանջ է դրել, որ մասնակիցները պետք է ունենան համապատասխան մասնագիտական փորձառություն:

Գազահաշվիչները էլեկտրոնային ճշտիչներով կահավորման աշխատանքը յուրահատուկ և շատ բարդ գործընթաց է, որը պահանջում է համապատասխան մասնագիտական փորձ և գիտելիքներ, արտադրական և տեխնոլոգիական հատուկ հանդերձանք, որի արդյունքում ճշտիչը ներկառուցվում է գազահաշվիչի իրանին, իսկ ճշտիչի սենսորները տեղադրվում են հաշվիչի ներսում և այդ կառուցվածքային և ֆունկցիոնալ արտադրատեսակը ամբողջությամբ հանդիսանում է բնական գազի հաշառքի սարք: Տեղադրվող յուրաքանչյուր էլեկտրոնային ճշտիչը փորձարկվում է հատուկ բնակլիմայական խցիկում, որը վերարտադրում է ճշտիչների շահագործմանը համապատասխանող պայմանները և որտեղ էլ կատարվում են ճշտիչների պարտադիր տրամաչափարկման աշխատանքները էքսկլյուզիվ (բացառիկ) մշակված մեթոդիկայի համաձայն: Այսպիսով, կահավորման աշխատանքներն իրականացնելու համար կահավորման ծառայություն մատուցող կազմակերպությունը պետք է լիովին և մանրամասնորեն տիրապետի ճշտիչների հավաքակցման աշխատանքներին առնչվող հստակ ընթացակարգով նախատեսված անհրաժեշտ բոլոր համապատասխան տեխնոլոգիական գործընթացներին:

Գործող ընթացակարգից ցանկացած շեղում կարող է պատճառ հանդիսանալ գազի ծավալի ոչ ճշգրիտ հաշվառման, որի նախադեպը արձանագրվել է 2016-17թթ. ընթացքում, երբ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն կրեց խոշոր վնասներ և դրանց միայն մի փոքր մասը փոխհատուցվեց «Գազ Սուզան Արմենիա» ՍՊԸ կողմից:

Շահագործման մեջ գտնվող Elcor-MU տիպի էլեկտրոնային ճշտիչները նախագծվել և արտադրվել են «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից առաջադրված յուրահատուկ տեխնիկական պահանջներին համապատասխան, առավելագույնս համապատասխանեցված Հայաստանի պայմաններին (ամառային և ձմեռային ջերմաստիճանների խիստ տարբերություն, բարձրադիր լեռնային և ցածրադիր գոտիներ) և մինչ շահագործման մեջ մտնելը անցել են երկարատև փորձարկում «Գազպրոմ

Արմենիա» ՓԲԸ գազաբաշխման համակարգում, որի արդյունքում էլ ավելի է բարձրացել ճշտիչների հուսալիությունը:

Ելնելով վերոնշյալից և հետագայում վնասներ կրելուց խուսափելու և ավելի արդյունավետ վերը նշված ծառայությունները իրականացնելու համար «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն նպատակահարմար է գտել ճշտիչների կահավորման աշխատանքները և էլեկտրոնային ճշտիչների ձեռքբերումը միացնել:

Միաժամանակ պետք է նշել, որ Բողոքաբերի կողմից 30.12.2019թ. բաց առաջարկների հարցման ներկայացված հայտի ուսումնասիրությունից պարզվել է.՝

1. Գազի մեմբրանային հաշվիչների ստուգաչափման զանգակային կայանքի («Bell Prover test Beneh») տեսակի հաստատման N5453 վկայականի հավելված՝ տեսակի նկարագիրը բացակայում է

2. Պարզ չէ վերոհիշյալ կայանքի վրա միաժամանակ տեղակաման ենթակա հաշվիչների քանակը և ստուգաչափման տևողությունը, որը հնարավորություն կտար ունենալ տեղեկատվություն կնքվելիք պայմանագրով նախատեսված ծավալների սպասարկման հնարավորության վերաբերյալ

3. «ETPC» տեսակի գազի ծավալի էլեկտրոնային ճշտիչի տեսակի հաստատման N1393 սերտիֆիկատի հավելված՝ տեսակի նկարագիրը բացակայում է:

4. «ETPC» տեսակի գազի ծավալի էլեկտրոնային ճշտիչի տեխնիկական բնութագրի փոխարեն ներկայացված է «տեխնիկական պահանջներ» անվամբ փաստաթուղթ, որում ամբողջությամբ կրկնված է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ կողմից ներկայացված «տեխնիկական բնութագրի» տեքստը: Ներկայացված չէ առաջարկվող «ETPC» տեսակի սարքի իրական տեխնիկական բնութագիրը կամ նրա անձնագիրը, այդ սարքերը «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ համակարգում մինչ օրս չեն շահագործվել, համապատասխան մասնագետները չունեն այդ սարքերի հետ աշխատանքի փորձ, որը շատ կարևոր է բաժանորդների հետ առևտրային հարաբերություններում կիրառվող սարքերի համար

5. G10-ից մինչև G160 գազահաշվիչները «ETPC» տեսակի գազի ծավալի էլեկտրոնային ճշտիչով կահավորման աշխատանքների ընթացքում օգտագործվող պահեստամասերի ցուցակի հետ համատեղ ներկայացված գծապատկերը չի հանդիսանում «ETPC» տեսակի էլեկտրոնային ճշտիչի տեղակայման գծապատկերը, իրականում հանդիսանում է այժմ փաստացի շահագործման մեջ գտնվող, «A-2» ՍՊԸ

կողմից արտադրված Elcorr-M տեսակի էլեկտրոնային ճշտիչների տեղակայման արտատպված գծապատկերը:

Պատվիրատուն գտնում է, որ «Գազ Սուզան» ՍՊԸ-ի 27.12.2019թ. բողոքը ամբողջությամբ անհիմն է, ոչ պատճառաբանված, առանց հիմնավոր փաստարկների և ենթակա է մերժման:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 15.01.2020թ. ժամը 10:00-ին և 29.01.2020թ. ժամը 11:15-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/99 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/99 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կարիքների համար բնական գազի մեմբրանային հաշվիչների (G2.5-ից G160 ողջ տիրույթի), Elcor-M և Elcor-MU տիպի էլեկտրոնային ճշտիչներով կահավորված բնական գազի մեմբրանային հաշվիչների (G10-ից G160 ողջ տիրույթի) ստուգաչափում, վերանորոգում և տրամաչափարկում, G10, G16 ,G25B գազահաշվիչները Elcor-MU տիպի էլեկտրոնային ճշտիչներով և անջատիչ կափույրներով, իսկ G25A-ից G160 գազահաշվիչները Elcor-MU տիպի էլեկտրոնային ճշտիչներով կահավորում և վերանորոգում, էլեկտրոնային ճշտիչների ձեռքբերման նպատակով հայտարարվել է N035/Garm/20_4.2_5.4_092-002/20.12.19 ծածկագրով բաց առաջարկ (հետայսու նաև՝ Առաջարկ):

2. Առաջարկի 4.1 հավելվածը՝ ***էլեկտրոնային ճշտիչների ձեռքբերման*** տեխնիկական բնութագիրը ներկայացված է հետևյալ տեսքով

Հավելված 4.1
№035/GArm/20_4.3_5.4_092-002/20.12.19
ծածկագրով
բաց առաջարկների
հարցման
հանձնաժողովին

Տեխնիկական Բնութագիր

էլեկտրոնային ճշտիչներ ձեռքբերում

	Անվանումը	Չափ. միավ.	Քանակ	Միավորի առավելագույն արժեք ՀՀ դրամ	Ընդհանուր առավելագույն արժեքը ՀՀ դրամ	Մասնակցի կողմից առաջարկվող միավորի արժեք ՀՀ դրամ	Մասնակցի կողմից առաջարկվող Ընդհանուր արժեք ՀՀ դրամ
	Էլեկտրոնային ճշտիչներ	**հատ**	**850**	**222 000**	**188 700 000**		
Ընդամենը			**850**		**188 700 000**		

Չափման միջոցներին վերաբերվող պահանջները կարգավորվում են «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքի, «Բնական գազի գազամատակարարման և օգտագործման կանոնների» և կից թվարկած տեխնիկական պահանջների համաձայն՝

1. Նշանակությունը

Գազի ծավալի էլեկտրոնային ճշտիչները (այսուհետ՝ ճշտիչ), նախատեսված են բնական գազի, պրոպան-բութանի, լուսատու գազի և օդի ծավալները Ճշտելու համար, բերելով այն ստանդարտ պայմաններին (101,325 кПа и 20°C)

2. Ճշտիչների կառուցվածքը

Ճշտիչը նախատեսված է G10, G16, G25B թաղանթային գազահաշվիչներով աշխատելու համար, որոնց ելքի խողովակաստում ներկառուցված են փակիչ կափույր, ինչպես նաև G25A, G40, G65, G100, G160 թաղանթային գազահաշվիչներով աշխատելու համար, որոնցում բացակայում է փակիչ կափույրը:
Ճշտիչները պետք է կազմված լինեն հետևյալ տեխնիկական և ծրագրային ապահովման լրակազմով՝

- միկրոպրոցեսորային սարք տվյալների գրանցման համար՝ ցածր էներգասպառման հիշողությամբ, տվյալների փոխանցման ստանդարտ ինտերֆեյս, գազի հաշվիչից ստացված մուտքային իմպուլսների կերպափոխիչ սարք, բացարձակ ճնշման և դիմադրության ջերմաստիճանի տվիչներ, տառաթվային ՀԲ ցուցիչ, ներկառուցված մարտկոց.
- ճշտիչների ծրագրային ապահովման և արխիվային տվյալների վերծանման Կոնֆիգուրացիա «ճշտիչ-համակարգիչ» կապի մալուխի միջոցով՝ պաշտպանված չարտոնված մուտքից:

3. Նշանակման ցուցանիշներ

Ճշտիչը պետք է ապահովի:

- բնական գազի ծավալի ճշտում՝ կախված գազի ճնշումից, ջերմաստիճանից և աշխատանքային պայմաններում հաշվիչով չափված ծավալից
- հաշվարկման (փոփոխական, նախնական 10ր) և տրամաչափարկման ռեժիմների ժամանակահատվածների համար կատարի ջերմաստիճանի և ճնշման միջինացված արժեքների դուրս բերում՝ 6 անգամ չափումների տվյալներից բացառելով առավելագույն և նվազագույն արժեքները:
- Ճնշման և ջերմաստիճանային արժեքների չափման ժամանակ՝ չափումները կատարել ամբողջ տիրույթով, չսահմանափակել գրանցման տիրույթը:
- Սեղմելիության գործակիցը կարելի է համարել պայմանական հաստատուն մեծություն և հավասար է 0.9998:
- մուտքային իմպուլսները կերպափոխող սարքից ստացված յուրաքանչյուր իմպուլսի համար իրականացնել չճշգրտված և

ստանդարտ պայմաններում գազի ծավալի հաշվարկ:

- Իմպուլսային ազդանշանի բազմակի թրթռման երևույթներից խուսափելու նպատակով՝ առաջին իմպուլսի ճակատից սկսած չկատարել չափում 100 միլի վայրկյանի ընթացքում և պետք է հաշվի 1(մեկ) իմպուլս այդ ժամանակի միջակայքում:
- տառաթվային ՀԲ ցուցիչի վրա շահագործման սկզբից չափված գազի ծավալի ցուցանշում՝ չճշգրտված և ստանդարտ պայմաններում, անցած ամսվա և ընթացիկ ամսվա ընթացքում չափված գազի ծավալը ստանդարտ պայմաններում:
- ակնթարթային ծախսի չափում.

• ներկառուցված փակիչ կափույրի անջատում՝ ճշտիչի հիշողության մեջ իրադարձությունների գրանցմամբ և ցուցանշմամբ հետևյալ դեպքերում՝

- մագնիսի և էլեկտրամագնիսական ճառագայթման ներազդում հաշվիչի պատյանի, ներկառուցված բաղադրամասերի և ճշտիչի աշխատանքների վրա՝ որոնք կարող են ազդել չափագրումների և հաշվառման վրա.
- չճշգրտված ակնթարթային ծախսի արժեքի հաշվիչի չափման տիրույթի վերին սահմանից դուրս լինելու դեպքում

- ճշտիչի էներգետիկ անկախ հիշողությունում մինչև 240 վթարային ահազանգեր և մինչև 40 իրադարձություններ գրանցում յուրաքանչյուր մուտքագրվող պարամետրերի համար
- ճշտիչի ցածր էներգասպառման հիշողությունում նախկինում գրանցված տվյալների արխիվացում (Աղյուսակ1)՝
  - -ժամային տվյալներ, ոչ քիչ քան 61 օր
  - -օրական տվյալներ, 6 ամսվա համար
  - -ամսական տվյալներ, 1 տարվա համար
- ճշտիչների փոխդասավորությամբ սահմանված սիստեմային պարամետրերի (Աղյուսակ 2) – փոփոխում և գրանցում.
- փոխդասավորության պարամետրերի վերծանում
- ամենօրյա և ամսական հաշվետվությունների տվյալների պարբերական հաշվարկված ձևավորումը, ինչպես նաև վթարային ահազանգերի և իրադարձությունների.
- արխիվների և հաշվետվությունների չարտոնագրված մուտքերից պաշտպանությունը

4. Պահանջները չափագիտական բնութագրերին

- Ճշտիչի հիմնական հարաբերական սխալանքի սահմանը ± 0,5 %;
- միջստուգաչափական ժամանակամիջոցը ՝2 տարի:

5. Պահանջներ կառուցվածքին

- Ճշտիչների բաղադրիչ մասերի կառուցվածքը, ներկառուցված լրակազմ հանգույցները, տարրերի և նյութերը պետք է համապատասխանեն ՀՀ-ում գործող ստանդարտներին և ՏՊ՝ ճշտիչի օգտագործման և աշխատանքային ռեժիմների սահմանված պայմաններին
- Ճշտիչի կառուցվածքը և նրա բաղկացուցիչ մասերը, ներառյալ գազահաշվիչը պետք է ապահովեն ամբողջ կառուցվածքի հերմետիկությունը և բացառել չարտոնված մուտքի հնարավորությունը, որը կբերի անճշտություններ ճշտիչների և հաղորդիչների աշխատանքներում.
- Ճշտիչի իրանը պետք է լինի անթափանց կամ մգեցված, բացի տառա-թվային ՀԲ ցուցիչի և տպասլիկի վրա նշված գործարանային համարի դիմային հատվածից
- Չժանգոտվող ճոպանի միջոցով Ճշտիչը կնիքված լինի ՉԱԻ և արտադրող կազմակերպության կնիքներով, ճոպանը լինի չժանգոտվող մետաղից և դիմանա ուժային լարմանը

6. Արտաքին ազդակների նկատմամբ պահանջներ

- պետք է ունենա համապատասխան պաշտպանվածության աստիճան IP65 փոշու և ջրի ներթափանցումից.
- դիմակայել 95% օդի հարաբերական խոնավության ազդեցությանը 35^0 C ջերմաստիճանի պայմանում;
- լինի դիմացկուն սինուսոիդային թրթռումների հաճախականության ազդեցության նկատմամբ 5 - ից մինչև 35Hz 0.35 մմ-ոց շեղման ամպլիտուդի դեպքում.
- պետք է դիմակայի մագնիսական դաշտի ազդեցությանը և էլեկտրամագնիսական ճառագայթմանը

7. Պայթյունապաշտպան վածությունը

- Ճշտիչը պետք է լինի պայթյունապաշտպանված՝ ունենալով պայթյունապաշտպանվածության աստիճան, ապահովելով ճշտիչի շարունակական անվտանգ շահագործման համապատասխանելիությունը պայթյունավտանգ գոտիում.

8.Հուսալիության պահանջներ

- անխափան աշխատատևությունը՝ առնվազն 12000 ժամ
- ծառայության ժամկետ՝ առնվազն 12 տարի.
- մարտկոցի աշխատանքային տևողությունը պետք է բավարարի 4 տարի, առնվազն ամիսը 2 անգամ տվյալների վերծանման դեպքում.

9. Շահագործման պայմանները

- առավելագույն աշխատանքային ավելցուկային ճնշումը 50 կՊա
- շրջակա միջավայրի ջերմաստիճանը -40 ^{0}C - ից մինչև +70 ^{0}C
- չափվող գազի ջերմաստիճանը -30 ^{0}C - ից մինչև +60 ^{0}C.

10. Մակնշում

Ճշտիչի վրա պետք է մակնշված լինի ՝

- արտադրողի ապրանքանիշը
- անվանումը
- ապրանքի գործարանային համարը

11.Արտադրանքի լրակազմը

Արտադրատեսակի լրակազմը պետք է կազմված լինի

- Ճշտիչը՝ ներկայացված այս դասակարգման 2 բաժնում հետևյալ կազմում՝
- շահագործման ձեռնարկ;
- անձնագիր;
- տրամաչափարկման մեթոդիկա
- ամեն 100 հատ ճշտիչների խմբաքանակի համար տրամադրել «Համակարգիչ-ճշտիչ» կապի մալուխ
- ճշտիչներից տվյալների վերծանման համար անլար կապի ձեռքի տերմինալ (նախընտրելի տարբերակ)

12. Երաշխիքները

Երաշխիքային ժամկետը՝ արտադրանքը ընդունելուց հետո 2 տարի

13. Տրամաչափարկում

- Ապրանքները պետք է անցնեն տեսակի հաստատում, «Չափումների միասնականության ապահովման» ՀՀ օրենքի համաձայն, տրամաչափարկում և առաջնային ստուգաչափում.
- արտադրանք մոնիտորինգը իրականացվում է մատակարարի մասնակցությամբ այս դասակարգման թիվ 2,3,4,7,9,10,11 բաժինների պահանջների համաձայն.
- ապրանքի ընդունումը կատարվում է խմբաքանակի յուրաքանչյուր արտադրանքի մուտքային հսկողություն գործող կանոնադրության համաձայն, մասնավորապես, ներառելով շահագործման պայմաններին համապատասխան փորձարկումներ և

տրամաչափարկում ներքոհիշյալ փորձարկման և տրամաչափարկման եղանակով, առաջնային ստուգաչափում տեխնիկական հանձնման-ընդունման ակտի ձևակերպմամբ.

- կատարել փորձարկումներ կլիմայական խցիկում՝ ոչ պակաս 48 ժամ տևողությամբ, մինչև -30°C ջերմաստիճանային և մինչև 95% խոնավության պայմաններում, այնուհետև իրականացնել ճնշման և ջերմաստիճանի տվիչների տրամաչափարկում առնվազն՝ ջերմաստիճանային (-30 °C, 0 °C, 60 °C) և բացարձակ ճնշման (մթնոլորտային, 95 կՊա, 115 կՊա պահանջի դեպքում 130կՊա) ստուգման կետերում:
- Տրամաչափարկման արդյունքում սահմանված չափագիտական բնութագրերի համապատասխանության դեպքում տրվում է տրամաչափարկման սերտիֆիկատ:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Գազ Սուզան» ՍՊԸ-ի կողմից 27.12.2019թ. ներկայացված բողոքը, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի գրությունը սույն բողոքի շրջանակներում, N035/Garm/20_4.2_5.4_092-002/20.12.19 ծածկագրով բաց առաջարկի հրավերը, գտնում եմ, որ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: <u>Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:</u>

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է

բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմաններով գնում կատարելու դեպքերի:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կարիքների համար բնական գազի մեմբրանային հաշվիչների (G2.5-ից G160 ողջ տիրույթի), Elcor-M և Elcor-MU տիպի էլեկտրոնային ճշտիչներով կահավորված բնական գազի մեմբրանային հաշվիչների (G10-ից G160 ողջ տիրույթի) ստուգաչափում, վերանորոգում և տրամաչափարկում, G10, G16 ,G25B գազահաշվիչները Elcor-MU տիպի էլեկտրոնային ճշտիչներով և անջատիչ կափույրներով, իսկ G25A-ից G160 գազահաշվիչները Elcor-MU տիպի էլեկտրոնային ճշտիչներով կահավորում և վերանորոգում, էլեկտրոնային ճշտիչների ձեռքբերման նպատակով հայտարարվել է N035/Garm/20_4.2_5.4_092-002/20.12.19 ծածկագրով բաց առաջարկ, սահմանելով ***էլեկտրոնային ճշտիչների ձեռքբերման*** տեխնիկական բնութագիրը, համաձայն 4.1 հավելվածի նաև՝ Առաջարկ):

Այսպիսով՝ ուսումնասիրելով «N035/Garm/20_4.2_5.4_092-002/20.12.19» ծածկագրով բաց առաջարկի 4.1 հավելվածը՝ ***էլեկտրոնային ճշտիչների ձեռքբերման*** տեխնիկական բնութագիրը, գտնում եմ, որ այն համապատասխանում է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին հետևյալ հիմնավորմամբ.

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի

բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Վերոհիշյալ նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ տեխնիկական բնութագիրը պետք է լինի հնարավորինս հստակ՝ ներառելով գնման առարկայի բոլոր հատկանիշները և միակ պայմանն այն է, որ տեխնիկական բնութագիրը չպետք է պահանջ կամ հղում պարունակի որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց, իսկ հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Դրա հետ մեկտեղ գնումների և գնումների գործընթացի իրականացման կարևորագույն սկզբունքներից է հանդիսանում գնման արդյունավետ և օգտավետ իրականացումը, հետևաբար պատվիրատուի կողմից իրականացվող գնումը պետք է լիարժեք համապատասխանի վերջինիս գնման պահանջին և ապահովվի պատվիրատուի այն կարիքի բավարարումը, որի նպատակով կազմակերպվել է նշված գնումը և միևնույն ժամանակ չհակասի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 13-րդ հոդվածների պահանջներին:

Այսպիսով ուսումնասիրելով Առաջարկի 4.1 հավելվածը՝ ***էլեկտրոնային ճշտիչների ձեռքբերման*** տեխնիկական բնութագիրը, ակներև է, որ բնութագրում Elcor-Mu և Elcor-M մոդելների հղումներ առկա չեն և գտնում եմ, որ այն կազմված է գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխան և չի հակասում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով սահմանված՝ տեխնիկական բնութագրի կազմմանը ներկայացվող պահանջներին, մասնավորապես՝ խտրական չէ և հղում չի կատարում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, ուստի նման պայմաններում չի խախտվում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի, ինչպես նաև Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները:

Ինչ վերաբերվում է Ընկերության կողմից ներկայացված այն պնդմանը, որ 50 տոկոսի չափով գործարք ունենալու փաստը /փորձը/ չափազանցված և անհիմն պահանջ է և խախտում է օրենսդրության պահանջները, ապա սույն մասով անհրաժեշտ եմ համարում արձանագրել հետևյալը.

Առաջարկի հրավերի ՄԱՍ 1-ի 2.3-րդ կետով սահմանվել է, որ մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեության չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (հավելված 3.2), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր:Նախկինում կատարած պայմանագիրը գնահատվում է նմանատիպ, եթե դրա շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ բաց առաջարկների հարցման շրջանակներում մասնակցի ներկայացրած ***գնային առաջարկի 50 %-ից:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 61-րդ կետով սահմանվել է, որ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնի հայտարարություն այն մասին, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր, պայմանով, որ գնահատող հանձնաժողովը կարող է սույն կետի 2-րդ ենթակետի հիման վրա ներկայացված պայմանագրի (համաձայնագրերի, պայմանագրերի) կատարված լինելու իսկությունը ստուգել կոմիտեի միջոցով: Նախկինում կատարված պայմանագիրը (պայմանագրերը) գնահատվում է (գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած ***գնային առաջարկի հիսուն***, իսկ ճանապարհաշինարարական աշխատանքների դեպքում՝ յոթանասուն տոկոսից:

Ընդ որում՝ Կարգի 61-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ***մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:***

Այսպիսով՝ գտնում եմ, որ Պատվիրատուի կողմից պահպանվել է վերը նշված իրավակարգավորումների պահանջը, ուստի սույն մասով Առաջարկի հրավերը չի կարող դիտարկվել որպես խտրական պահանջ:

Ինչ վերաբերվում է Ընկերության այն դիտարկմանը, որ գնումը ոչ իրավաչափորեն միացված է իրար և կարող էր արդյունավետ տարբեր գնումներով իրականացվել, քանի որ դրանք իրարից տարբեր ծառայություններ են և միացնելով նպատակ է հետապնդվում, որպեսզի բոլորը իրականացնի մեկ կազմակերպություն, բնականաբար ոչ բողոքաբերը, ապա սույն մասով արձանագրում եմ հետևյալը.

Առաջարկը իր մեջ ներառում է բնական գազի մեմբրանային հաշվիչների (G2.5-ից G160 ողջ տիրույթի), Elcor-M և Elcor-MU տիպի էլեկտրոնային ճշտիչներով կահավորված բնական գազի մեմբրանային հաշվիչների (G10-ից G160 ողջ տիրույթի) ստուգաչափում, վերանորոգում և տրամաչափարկում, G10, G16, G25B գազահաշվիչները Elcor-MU տիպի էլեկտրոնային ճշտիչներով և անջատիչ կափույրներով, իսկ G25A-ից G160 գազահաշվիչները Elcor-MU տիպի էլեկտրոնային ճշտիչներով կահավորում և վերանորոգում, էլեկտրոնային ճշտիչների ձեռքբերում:

Առաջարկը կազմակերպվել է մեկ չափաբաժնով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի համաձայն՝

1. Մրցակցային գնման ձևերի կիրառման ժամանակ առանձին բնութագրեր ունեցող գնումները մեկ գնման գործընթացի շրջանակներում կարող են բաժանվել չափաբաժինների: Արգելվում է՝

1) մեկ գնման առարկան բաժանել առանձին չափաբաժինների՝ մրցակցային գնման ձևի կիրառումից խուսափելու նպատակով.

2) փոփոխել պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների բնութագրերը:

2. Արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Առաջարկը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի պահանջների պահպանմամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Գազ Սուզան» ՍՊԸ-ի բողոքն հիմնավոր չէ և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Գազ Սուզան» ՍՊԸ-ի կողմից 27.12.2019թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**